

## ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՑ ՄԱՍՈՒԼԻ ԵՒ ՄՏԱԻՌՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԹՈՒՐՔԻԱՅ ՆԱԽԱԳԱՅ ԳԻՒԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԻ ԱՌԻԹՈՎ

ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի նախաձեռնութեամբ, Հինգշաբթի, Սեպտեմբերի 4-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Կենտրոնական Կոմիտէի «Փէշէքերեան» կենտրոնի ժողովասրահում տեղի ունեցաւ հանդիպում-գրոյց՝ գաղութիս հայկական լրատուամիջոցների ներկայացուցիչների եւ մտաւորականների մասնակցութեամբ: Միջոցառման բացումը կատարեց Կենտրոնական Կոմիտէի Հանրային Կապի գրասենեակի պատասխանատու Սարո Նազարեանը, որը ողջունելով ներկաներին, յայտնեց, որ միջոցառման նպատակն է ներկայացնել ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կեցուածքը եւ տեսակետը՝ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիւլի Սեպտեմբերի 6-ի Հայաստան այցելութեան վերաբերեալ: Այդ իմաստով նա խօսքը տուեց Կենտրոնական Կոմիտէի անդամ, իրաւաբան Սեդո Պոյաճեանին, որը շեշտելով, թէ այս այցելութիւնը հիմնականում ստանում է քաղաքական բնոյթ, նշեց, որ պատասխանն ու անդրադարձը եւս պէտք է ներկայացնի հասուն կեպրով պատրաստուած քաղաքական բանաձեւ: Վերահաստատելով Կենտրոնական Կոմիտէի այն տեսակետը, որ Հայաստանը պէտք է ունենայ բարի դրացիական յարաբերութիւններ իր հարեւան բոլոր երկրների հետ, որպէսզի չհնքնամեկուսականայ արտաքին աշխարհից, Սեդո Պոյաճեանը շեշտեց, որ «այս բոլորը, սակայն, չի նշանակեր, որ մենք պիտի զիջինք մեր սկզբունքներէն: Այս բոլորը չի նշանակեր, թէ ինչ-որ մեզմէ խնդրուի պիտի ընենք եւ տեղ մըն ալ պիտի գայ, որ մեր ամբողջ ազգային դրամագլուխը, ազգային համոզումները, սկզբունքները մէկդի պիտի դնենք, պարզապէս, պատառ մը հաց ապահովելու համար: Եթէ Գիւլը պիտի այցելէ Հայաստան, հազար բարի՛, բայց նաեւ նա պէտք է անդրադառնայ, որ կայցելէ երկիր մը, որ պատրաստ է մտիկ ընելու իրեն, բայց նաեւ պատրաստ է իրեն ըսելու, որ մենք լուծելիք լուրջ հարցեր ունինք: Եթէ դուք պատրաստ էք գործակցելու մեզի հետ այս հարցերը լուծելու համար, շա՛տ լաւ, բայց եթէ պիտի գաք եւ մեզի վերջնագրեր պիտի տաք, ըսելով, որ զիջեցէք ձեր սկզբունքները, թողէք ձեր պահանջները եւ այն ատեն միայն կը գործակցինք, այդ պարագային Գիւլը իր այս այցելութեամբ, ինչպէս նաեւ համայն թուրք ժողովուրդը կորսնցուցած պիտի ըլլան մեծ պատեհ առիթ մը»: Ընդգծելով, որ արեւմտեան երկրները, մասնաւորաբար Միացեալ Նահանգները քաջալերում եւ մեծ կարեւորութիւն են տալիս այս այցելութեանը, նա նաեւ շեշտեց, որ իբրեւ ամերիկահայեր մեր պարտաւորութիւնն է ցոյց տալ եւ հասկացնել ամերիկեան իշխանութիւններին, որ ամերիկահայութիւնը թէւ դրական է համարում այցելութեան այս նախաքայլը, բայց եւ այնպէս, պնդում է, որ հայ-թուրքական ցանկացած յարաբերութիւն պէտք է հիմնուած լինի պատմական ճշմարտութեան եւ արդարութեան վրայ: «Մենք նաեւ կը յուսանք, որ Թուրքիոյ նախագահը Հայաստան իր այցելութիւնը քարոզչական փառատօնի մը չվերածէ: Մենք կուզենք հաւատալ, որ Գիւլը այս այցելութեամբ լուրջ քայլ մը կաննէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ բարի դրացիութեան եւ համագործակցութեան նոր էջ մը բանալու ուղղութեամբ», - նշեց Սեդո Պոյաճեանը եւ այնուհետեւ պատասխանեց ներկաների հարցերին՝ Գիւլի սոյն այցելութեան կապակցութեամբ:

Միջոցառմանը ելոյթ ունեցաւ նաեւ ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ, իրաւաբան Վիգէն Սոնենց-Փափազեանը, որը հիմնականում ծանրացաւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման վրայ, մտահոգութիւն յայտնելով, որ այս այցելութիւնը չպէտք է ստանայ Հայոց Ցեղասպանութեան հարցը շրջանցելու բնոյթ, քանի որ Թուրքիան պատասխանատու է մարդկութեան դէմ գործած այս յանցանքի համար եւ որ այն ամէն ինչ անում է ժխտելու եւ ուրանալու Հայոց Ցեղասպանութեան փաստը, որպէսզի չպարտաւորուի իրաւական հատուցում տալու միջազգայնօրէն դատապարտուած այս յանցագործութեան համար: «Հայաստան այցելելով Թուրքիայի նախագահի համար պատմական մեծ պատեհութիւն է ստեղծուում լուծելու իր առջեւ դրուած այս հարցը: Մնում է, որ նա ընդունի եւ ճանաչի Հայոց Ցեղասպանութիւնը եւ հատուցում տալ հայ ժողովրդին կատարուած այս յանցագործութեան համար : Այլապէս Հայաստան այցելելով եւ ֆուտբոլային խաղ դիտելով Գիւլը հանդէս կը գայ թատերական ինչ-որ ներկայացման դերակատարի հանգամանքով: Հայ-թուրքական վերահաշտեցման գործընթացը բարդ հարց չէ, պարզապէս անհրաժեշտ է, որ Թուրքիան ճանաչի այն, ինչը արդէն գիտեն եւ հաստատել են աշխարհի շատ ու շատ երկրներ: Այսինքն Թուրքիան ճանաչի, որ հայութիւնը եղել է ցեղասպանութեան զոհ եւ առ այդ նա պահանջում է արդարութիւն», - նշեց Վիգէն Սոնենց-Փափազեանը եւ այնուհետեւ հարց ու պատասխանի կարգով տեղի ունեցան մտքերի լայն փոխանակումներ Թուրքիայի նախագահի Հայաստան այցի առնչութեամբ:

Միջոցառումը փակ յայտարարուեց երեկոյեան ժամը 9:15-ին:

Նշենք, որ Սեդօ Պոյաճեանի եւ Վիգէն Սոնենց-Փափազեանը ելոյթները ամբողջութեամբ կարելի է լսել՝ միանալով ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կայքէջին՝ [www.ARF1890.com](http://www.ARF1890.com) հասցեով:

ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կենտրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակ  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations@ARF1890.com](mailto:PublicRelations@ARF1890.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467